

Հաստատված է

Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի կոլեգիալ
կառավարման խորհրդի թիվ 2, 106.02.2023/1 նիստում

/ խորհրդի նախագահ՝ [Ստորագրություն] /Ա. Նաջարյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՇԻՐԱԿԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ»
/պետական ոչ առևտրային կազմակերպություն/

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ

ք. Գյումրի

2023թ.

2016թ. հաստատված և գործող կանոնակարգը վերանայվել և լրմշակվել է 2023թ.

Աշխատախումբ՝

- Քոլեջի տնօրեն
- Կրթության որակի պատասխանատու
- Տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքների գծով
- Տնօրենի տեղակալ դաստիարակչական աշխատանքների գծով

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Ներքին կարգապահական կանոնները ՀՀ օրենսդրությանը համապատասխան սահմանում են Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի /այսուհետ ՇՏՊՔ/ սովորողների հիմնական իրավունքները, պարտականությունները:

1.2. Ներքին կարգապահական կանոնների կանոնակարգը հաստատվում է Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի կոլեգիալ կառավարման խորհրդի կողմից:

1.3. Ներքին կարգապահական կանոնների պահպանմանն առնչվող հարցերը կարգավորվում են Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի վարչակազմի կողմից՝ ՀՀ օրենսդրության, Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի կանոնադրության հիման վրա:

1.4. Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանողները պետք է լինեն իրազեկ սույն ներքին կարգապահական կանոններին:

2. ՔՈԼԵՋԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

2.1. Քոլեջի ուսանողը միջին մասնագիտական կրթական ծրագրեր յուրացնելու համար տնօրենի հրամանով, մրցութային հիմունքով ընդունված անձն է, որին տրվում է սահմանված նմուշի ուսանողական տոմս և ստուգման գրքույկ:

2.2. Քոլեջի ուսանողի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են սույն կանոնակարգով, ներքին կարգապահության կանոններով, ուսանողի և գործատուի միջև կնքված պայմանագրով:

2.3. Քոլեջի ուսանողը ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված կարգով իրավունք ունի՝

2.3.1 ընտրելու տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար պարտադիր և տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար ոչ պարտադիր դասընթացներ, որոնք տրամադրում է քոլեջը,

2.3.2 մասնակցելու քոլեջի կառավարմանը՝ ընդգրկվելով խորհրդի կազմում, մասնակցելու ուսանողական խորհրդի, խմբակների, ակումբների ստեղծմանը և դրանց աշխատանքներին,

2.3.3 մասնակցելու իր կրթության բովանդակության ձևավորմանը՝ պահպանելով մասնագիտական կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների պահանջները,

2.3.4 ստանալու կրթություն՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան և ձեռք բերելու գիտության, տեխնիկայի և մշակույթի զարգացման ժամանակակից մակարդակին համապատասխան գիտելիքներ,

2.3.5 վճարովի ուսուցման համակարգից փոխադրվելու անվճար ուսուցման համակարգ,

2.3.6 առողջական խնդիրների պատճառներով կամ այլ բացառիկ դեպքերում ստանալու ակադեմիական արձակուրդ՝ պահպանելով իր ուսանողական իրավունքը, ինչպես նաև վերականգնելու ուսումնառությունը որևէ պատճառով անավարտ թողած իր ուսանողական իրավունքը,

2.3.7 տեղափոխվելու մեկ այլ, այդ թվում՝ նաև պետական հավատարմագրում ստացած, մասնագիտական ուսումնական հաստատություն,

2.3.8 անվճար օգտվելու քոլեջի գրադարանից, մարզական և ուսանողին հասանելի այլ ռեսուրսների ծառայություններից,

- 2.3.9 մասնակցելու քոլեջի հետազոտական, նախագծային աշխատանքների կատարմանը,
- 2.3.10 ստանալու ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման պետական նպաստ և կրթաթոշակ,
- 2.3.11 օգտվելու սահմանված չափի՝ ներառյալ անվանական, ինչպես նաև իրեն ուսման ուղարկած իրավաբանական կամ ֆիզիկական անձանց նշանակած կրթաթոշակներից, նպաստներից և վարկերից, նվիրատվություններից և դրամաշնորհներից,
- 2.3.12 օգտվելու այլ իրավունքներից

2.4. Հարգելի պատճառներով /զինվորական ծառայության/ քոլեջից ազատված ուսանողը վերականգնվելիս՝ պահպանում է նախկինում ունեցած ուսանողական նպաստ կամ կրթաթոշակ ստանալու իրավունքը:

2.5. Քոլեջի ուսանողը և դիմորդը իրավունք ունի ծանոթանալու սույն կանոնադրությանը, քոլեջում ուսուցանվող կրթական ծրագրերի լիցենզիաներին և ներիքն կանոնակարգերին, ինչպես նաև պետական հավատարմագրման վկայականին:

2.6. Քոլեջի ուսանողության ինքնակառավարման և նրա շահերը պաշտպանող մարմինն ուսանողական խորհուրդն է, որն ապահովում է ուսանողների մասնակցությունը քոլեջի կառավարմանը, համապատասխան մարմինների քննարկմանն է ներկայացնում ուսանողությանն առնչվող հարցեր:

Քոլեջի ուսանողական խորհուրդը համարվում է ստեղծված և օգտվում է սույն կանոնադրությամբ նախատեսված իրավունքներից՝ խորհրդի նախագահին իր անվանական կազմը և գործունեության կարգը պաշտոնապես ներկայացնելու պահից:

3. ՔՈԼԵՋԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Կատարել սույն կանոնակարգի պահանջները և պահպանել ներքին կարգապահական կանոնները:

3.2. Խնամքով վերաբերվել քոլեջի գույքին:

3.3. Հարգել աշխատողների և ուսանողների իրավունքներն ու արժանապատվությունը:

3.4. Վճարովի հիմունքներով սովորելիս՝ սահմանված կարգով և ժամկետներում վճարել ուսման վարձը:

3.5. Կատարել կրթական ծրագրերի պահանջները:

3.6. Հաճախել պարտադիր համարվող դասախոսություններին, սեմինար /գործնական/ պարապմունքներին:

3.7. Բարձր պահել քոլեջի ուսանողի պատիվն ու հեղինակությունը:

3.8. Պահպանել հասարակության բարոյական նորմերը:

3.9. Բարձր առաջադիմություն, փորձարարական նախագծային աշխատանքներում գործուն և արդյունավետ մասնակցություն ցուցաբերած ուսանողների համար խորհրդի կողմից են սահմանվել խրախուսման նյութական ու այլ ձևեր:

4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

4.1. Մանկավարժների և ուսնողների հետ շփումներում՝ ուսումնական գործառույթներում լինել ուշիմ, օրինապահ, շրջահայաց, արդարամիտ, օրինակելի:

4.2. Մանկավարժների և ուսնողների հետ շփումներում չնսեմացնել քոլեջի հեղինակությունը:

4.3. Հարգել և ըստ արժանապատվության գնահատել մանկավարժի կարծիքը ուսումնադաստիարակչական գործառույթներում, հաշվի առնել նրա հեղինակությունը, մասնագիտական փորձառությունը, միաժամանակ գնահատել նրա դերն ու նշանակությունը քոլեջի կրթադաստիարակչական գործընթացներում:

- 4.4. Ընկերների վերաբերյալ քննադատությունը արտահայտել միայն նրանց ներկայությամբ, իսկ բացակայության ժամանակ նրանց անձը և ինքնությունը չվնասելով՝ պարզաբանել թույլ տված հանցանքի կամ սխալի բոլոր նախադրյալները:
- 4.5. Հետևել քոլեջի կանոնադրությանը, ներքին կանոնակարգերին ու օրենքներին:
- 4.6. Ուսումնառության ընթացքում պահպանել բարոյական նորմերով սահմանված այլ չափանիշներ:

5. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՎԱՐՔԱԳԻԾԸ

5.1. Ուսանողին չի թույլատրվում.

- 5.1.1 Շահադիտական կամ այլ բնույթի տնօրինական պահանջ ներկայացնել մանկավարժների և ուսանողների նկատմամբ: Նմանատիպ արարքի համար ուսանողը պատասխանատվություն է կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 5.1.2 Ուսումնառության ընթացքում հաստատության տնօրինությանը առանց տեղյակ պահելու ուսումնադաստիարակչական գործընթացը խաթարող այլ անձի կամ անձերի հետ որևէ անհավասարաչափ գործառույթի մասնակցել:
- 5.1.3 Առանց թույլտվության օգտագործել քոլեջի նյութատեխնիկական միջոցները:
- 5.1.4 Դասերի ընթացքում օգտվել քջջային հեռախոսներից:
- 5.1.5 Ծխել Քոլեջի տարածքում:
- 5.1.6 Անհարգելի բացակայել դասերից:
- 5.1.7 Չվճարել ուսման վարձավճարը պայմանագրով սահմանված կարգով:
- 5.1.8 Խախտել ՀՀ օրենսդրությամբ սահմանված ազատությունները և իրավունքները:

6. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼԸ ԵՎ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼԸ

- 6.1. Քոլեջի ուսանողները ենթակա են խրախուսանքի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով: Ուսանողների նկատմամբ խրախուսանքները կիրառվում են տնօրենի հրամանով:
- 6.2. Ուսումնառության ընթացքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրեն վերապահված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև իր իրավունքները գերազանցելու, սույն Կանոնները խախտելու դեպքերում ուսանողը ենթակա է կարգապահական պատասխանատվության, ընդհուպ մինչև նրա հետ Քոլեջի պայմանագրի խզման:
- 6.3. Քոլեջի ուսանողի նկատմամբ կիրառվում է՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգապահական տույժեր, որը կիրառվում ք տնօրենի հրամանով:
- 6.4. Կարգապահական տույժ կիրառելը ուսանողին չի ազատում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության մյուս տեսակներից:
- 6.5. Կարգապահական տույժը համարվում է մարված, եթե ուսանողը կարգապահական տույժ նշանակելու օրվանից մեկ տարվա ընթացքում նոր կարգապահական խախտում թույլ չի տվել:
- 6.6 Ուսանողների կողմից քոլեջի կանոնադրությամբ, սույն կանոններով տեղայնացված նորմատիվ և անհատական իրավական ակտերով, մասնագետների պատրաստման պայմանագրերով նախատեսված պարտականությունների և պարտավորությունների խախտման դեպքում նրանց հանդեպ կարող են կիրառվել ստորև բերված կարգապահական պատժամիջոցները՝

6.6.1 Նկատողություն

6.6.2 Խիստ նկատողություն

6.6.3 Հեռացում քոլեջից:

6.7. Ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի պահանջները և ուսումնական գործընթացի ժամանակացույցը չկատարելու, անբավարար ակադեմիական առաջադիմություն ցուցաբերելու, մեկ ուսումնական տարվա 210 դասաժամ բացակայելու, ուսանողի կողմից ուսումնառության գործընթացը կամավոր ընդհատելու, ինչպես նաև սույն կանոնակարգով նախատեսված պահանջները չկատարելու դեպքում՝ ուսանողը կարող է տնօրենի կամ ժամանակավորապես պարտականությունները կատարող անձի՝ պաշտոնակատարի կողմից ենթարկվել կարգապահական պատասխանատվության՝ ընդհուպ մինչև քոլեջից հեռացվելը: